«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ

Հարգելի՛ գործընկերներ,

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու «ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» խորագրով միջազգային գիտաժողովին,

որը տեղի կունենա 2026 թ. հոկտեմբերի 2-ին:

Գիտաժողովը հարթակ է համախմբելու ոլորտի մասնագետներին՝ հոգեբանամանկավարժական գիտությունների զարգացման արդի խնդիրների քննարկման, գիտահետազոտական փորձի փոխանակման և արդյունավետ համագործակցության խթանման նպատակով:

Գիտաժողովի նպատակը

Քննարկել հոգեբանամանկավարժական գիտությունների զարգացման ժամանակակից միտումները, հիմնախնդիրները և հեռանկարները՝ կրթական համակարգի արդյունավետության բարձրացման և գիտահետազոտական փորձի փոխանակման համատեքստում:

Գիտաժողովի աշխատանքի ուղղությունները.

1. **Հոգեբանություն**

- Հոգեբանության զարգացման արդի տեսություններն ու մոտեցումները
- Կրթության և զարգացման հոգեբանություն
- Սոցիալական հոգեբանություն
- Գործնական հոգեբանություն
- Անձի հոգեբանություն
- Արտակարգ իրավիճակների հոգեբանություն

2. **Մանկավարժություն**

- Մանկավարժության զարգացման արդի տեսություններն ու մոտեցումները
- Տարիքային մանկավարժություն
- Սոցիալական մանկավարժություն
- Դիդակտիկա և դասավանդման մեթոդիկա
- Կրթության կառավարում

- Ուսուցչի մասնագիտական զարգացում և մանկավարժական կարողունակությունների ձևավորում

3. Հատուկ հոգեբանություն և մանկավարժություն

- Ներառական կրթության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները

Գիտաժողովի աշխատանքային լեզուն

Հայերեն, ռուսերեն, անգլերեն

Մասնակցությունը գիտաժողովին

Գիտաժողովը նախատեսում է առկա և հեռակա մասնակցության ձևեր:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար անհրաժեշտ է պահանջվող նյութերն էլեկտրոնային տարբերակով ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ vsumhconference@gmail.com

1. Դիմում-հայտ (1-ին հավելվածում ներկայացված ձևով)՝ մինչև 2026 թ. հունիսի 30-ը:
2. Հոդվածը (2-րդ հավելվածում ներկայացված պահանջներով)՝ մինչև 2026 թ. սեպտեմբերի 1-ը:

Գիտաժողովի նյութերի հրատարակությունը

Գիտաժողովը կանցկացվի Վանաձորի պետական համալսարանում 2026 թ. հոկտեմբերի 2-ին, սկիզբը՝ ժամը 12^{00}-ին (մասնակիցների գրանցումը՝ ժամը 11^{30}-ին):

Տեղեկատվական հեռախոսահամարներ՝ (+374) 44-62-41-66 (մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Վանանե Խաչիկի Միրզոյան՝ պատասխանատու քարտուղար), (+374) 93-33-38-34 (մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Գագիկի Բաղդասարյան՝ նախագահ), (+374) 94-21-11-96 (մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Հայկ Ռոդիկի Ավագիմյան՝ նախագահի տեղակալ):

Հավելված 1. Գիտաժողովին մասնակցելու դիմում-հայտի ձևը

Անունը, հայրանունը, ազգանունը	
Գիտական աստիճանը, կոչումը	
Զեկույցի թեման	
Աշխատավայրը/ուսումնառության վայրը (լրիվ անվանումը)	
Պաշտոնը	
Հեռախոսահամար(ներ)ը	

Հայցորդի (ասպիրանտ) և մագիստրանտի դեպքում նշել մասնագիտությունը և կուրսը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Բնակության հասցեն	
Համառոտագրություն (մինչև 200 բառ)	

Հավելված 2

Հոդվածին ներկայացվող պահանջները

Հոդվածը կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ էլեկտրոնային տարբերակով: Ընդունվում են միայն ԱՆՏԻՊ հոդվածները: Գիտաժողովի առկա մասնակիցներին կտրամադրվեն մասնակցության վկայագրեր:

Համակարգչային ձևավորումը

Համակարգչային շարվածքը՝ Microsoft Office Word 2007 ծրագրով, A4 չափսի թղթի վրա:

Լուսանցքները՝ վերևից (Top)՝ 25 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 25 մմ, աջից (Right)՝ 25 մմ:

Տառատեսակը՝ Հայերենի դեպքում՝ GHEA Grapalat, ռուսերենի և անգլերենի դեպքում՝ Times New Roman:

Տառաչափը՝ 12:

Միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1:

Պարբերությունը (First line)՝ 1 սմ:

Չկիրառել մեկից ավել միջբառային բացատ:

Առաջին էջի վերևում՝ մեջտեղում, տրվում է վերնագիրը՝ **թավ գլխատառերով**:

Հաջորդ տողում **տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին** (ուղղությունը դեպի աջ)

- հեղինակի **ազգանուն, անուն** (***թավ*** և ***շեղ***)
- *գիտական կոչում, աստիճան (շեղ)*
- *աշխատավայր (շեղ)*
- *երկիր (շեղ)*
- *էլեկտրոնային փոստի հասցե (շեղ)*

Հաջորդ տողում գրել «Հանգուցային բառեր»՝ 7-10 հանգուցային բառերով և բառակապակցություններով: Վերնագրում գործածված բառերը չպետք է կրկնվեն հանգուցային բառերի շարքում:

Հոդվածը պետք է ներառի հետևյալ կետերով.

1. **Ներածություն**

2. **Հետազոտության հիմնախնդիր**
3. **Հոդվածի նպատակ**
4. **Հետազոտության գիտական նորույթ**
5. **Հիմնական շարադրանք**
6. **Եզրակացություն**
7. **Առաջարկություն**
8. **Գրականություն**

Աղյուսակները, գծագրերը, նկարներն ու այլ պատկերները պետք է ունենան համարակալում. վերնագրային բացատրության տառաչափը՝ 10, ***թավ, շեղ (Bold, Italic***): Դրանց բարձրությունը չպետք է գերազանցի 170 մմ-ը, լայնությունը՝ 110 մմ-ը: Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, *շեղ*, 10 տառաչափով, իսկ հիմնականները՝ մեջտեղում առանձին տողով: Դրանք կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր փակագծերի մեջ՝ ():

Այն աշխատանքների համար, որոնք պարունակում են սիմվոլներ և GHEA Grapalat տառատեսակի մեջ չկան, պարտադիր է նաև դրանց էլեկտրոնային ֆոնտը:

Տեքստում հղումները տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ [ ][1]:

Ծանոթագրությունները տրվում են էջի ներքևում՝ աճման կարգով համարակալված:

Տեքստի վերջում գրվում է «**Գրականություն**» բառը՝ **թավ**, հաջորդ տողից՝ գրականության ցանկը՝ համարակալված այբբենական կարգով:

Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները՝ երկու լեզվով, հանգուցային բառերով: Ամփոփումները պետք է լինեն նույնական և բաղկացած լինեն 150-200 բառից:

Ամփոփման վերնագրից հետո՝ հաջորդ տողում, գրվում է անունը, ազգանունը և առանձին տողերով՝ «**Ամփոփում**» բառը, ամփոփման տեքստը՝ համապատասխան լեզվով, հանգուցային բառերը:

Հոդվածի ծավալը՝ 7-12 էջ:

Գրագողությունը բացառելու համար հոդվածները կտպագրվեն միայն հատուկ փորձաքննություն անցկացնելուց հետո:

---

[1] Օրինակ՝ [5, 60], 8, [136-151], որտեղ 5-ը և 8-ը գրականության ցանկի համապատասխան համարներն են, իսկ 60-ը, 136-151-ը՝ համապատասխան էջերը:

Հոդվածի հեղինակի մագիստրանտ լինելու դեպքում անհրաժեշտ է գիտական ղեկավարի երաշխավորագիրը.

Հավելված 3

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Հեղինակի անուն, ազգանուն	
Հոդվածի վերնագիր	
Գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անունը և ազգանունը	
Մագիստրանտի և հոդվածի վերաբերյալ կարծիք	

Գիտական ղեկավար		
	ստորագրություն	Գիտական աստիճան, կոչում, անուն, ազգանուն
Ամսաթիվ		

Օդանավակայանից համալսարան և հակառակ ուղղությամբ տեղափոխումը չի ներառվում:

Գիտաժողովի մասնակիցներին կուղարկվի գիտաժողովի նյութերի ժողովածուի էլեկտրոնային տարբերակը:

Կազմակերպական հանձնաժողովի հասցեն՝

ՀՀ, ք. Վանաձոր,

Տիգրան Մեծի 36